2011, ՀՈՒԼԻՍ Ա, ԹԻՎ 13 (345)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցը Սանկտ Պետերբուրգ եւ Լատվիա



**Հունիսի 27-ին** Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբի ուղեկցությամբ մեկնեց Սանկտ Պետերբուրգ՝ մասնակցելու հայ համայնքի 300-ամյակին նվիրված միջոցառումներին:

Օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանը եւ հայ համայնքի ներկայացուցիչները:

Հովվապետական այցն սկսվեց այցելությամբ Ս. Կատարինե հայկական եկեղեցի, ուր Ամենայն Հայոց Հայրապետին սպասում էին հարյուրավոր հայորդիներ: Ավանդական աղ ու հացի արարողությունից հետո Նորին Սրբությունը զանգերի ղողանջների ու «Հրաշափառ»-ի ներքո թեմի հոգեւորականների թափորով մուտք գործեց եկեղեցի, ուր Հայոց Կաթողիկոսին բարի գալուստ մաղթեց թեմի առաջնորդ Եզրաս սրբազանը: Սրբազան հայրը գոհություն հայտնեց Աստծուն Վեհափառ Հայրապետի օրհնաբեր այցի առիթով՝ հրավիրելով Նորին Սրբությանն իր օրհնությունն ու պատգամը բերել հավաքված հավատավոր ժողովրդին:

*«Փառք ենք տալիս Աստծուն, որ այսօր Հայրապետի հետ համախմբված գեղեցկակառույց այս եկեղեցու կամարների ներքո, ձեր առաջնորդի ու հոգեւոր դասի առաջնորդությամբ, ձեզ հետ միասին մենք աղոթական օրեր պիտի ապրենք: Փառք ենք տալիս Աստծուն, որ 300 տարի շարունակ մեր զավակները վառ են պահել ազգային եւ հոգեւոր կյանքը Սանկտ Պետերբուրգում, եւ այսօր էլ ազգային-եկեղեցական կյանքն այստեղ աշխուժություն է ապրում, հայորդիները համախմբված են եկեղեցու կամարների ներքո, փարված իրենց հայրերի սուրբ հավատքին՝ շեն ու պայծառ են պահում ազգային իրենց կյանքը»*,- նշեց Ամենայն Հայոց Հայրապետն իր խոսքում: Նորին Սրբությունը մասնավոր իր գնահատանքը հայտնեց Եզրաս սրբազանին, ում առաջնորդությամբ ու անմիջական ջանքերով սկիզբ առավ ազգային-հոգեւոր կյանքի վերակազմակերպումը Պետերբուրգում: Վեհափառ Հայրապետն այս առիթով հայրապետական օրհնությունն ու գնահատանքը բերեց նաեւ տեղական իշխանություններին, որոնց հոգատար վերաբերմունքի շնորհիվ հնարավոր դարձան վերջին քսան տարիների ընթացքում արձանագրված ձեռքբերումները:

Այնուհետեւ Գարեգին Բ Կաթողիկոսը հորդորեց ժողովրդին աջակից լինել հոգեւոր հայրերին, նախանձախնդրությամբ իրականացնել թեմի առաջնորդության, թեմական եւ ծխական խորհուրդների կողմից մշակվող բոլոր այն բարի եւ գեղեցիկ ծրագրերը, որոնք նպատակ ունեն պայծառացնելու ազգային-եկեղեցական կյանքը, Աստծո օրհնությունն ու աղոթքն առատացնելու հայորդիների հոգիներում ու հարկերից ներս: Նորին Սրբությունը նաեւ պատգամեց հայորդիներին միշտ իրենց քայլերն ուղղել դեպի եկեղեցի եւ ազգային հաստատություն, մասնակցել ազգային-հոգեւոր կյանքին, հայրենիքի շինության ու զորացման նվիրական գործին, հոգում կրել լույս պատկերը Ս. Էջմիածնի: *«Մնացե՛ք Տիրոջ օրհնության ներքո, մնացե՛ք միաբան, միմյանց հանդեպ սիրով, սիրով դեպի ազգային-եկեղեցական կյանքը: Ձեր սերն ու միաբանությունն են աղբյուրը ձեր կյանքի զորության, եկեղեցական-համայնքային կյանքի ամրության եւ գեղեցիկ իրագործումների ու ձեռքբերումների»*,- ասաց Հայոց Հայրապետը՝ վերստին փոխանցելով ամենքին Ս. Էջմիածնի օրհնությունը:



*Սանկտ Պետերբուրգի նահանգապետ Վալենտինա Մատվիենկոյի հետ*

**Նույն օրը** Սալտիկով-Շչեդրինի անվան ազգային գրադարանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ կատարվեց «Հայ-ռուսական հոգեւոր կապեր» խորագրով հայկական գրքերի ցուցահանդեսի բացումը: Գրադարանի փոխտնօրեն Իրինա Լեանդրովայի եւ Սանկտ Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոս Վարդան Հակոբյանի ողջույնի խոսքերից հետո Նորին Սրբությունն իր հայրապետական օրհնությունը բերեց ներկաներին՝ ցուցահանդեսը ռուս եւ հայ ժողովուրդների հոգեւոր կապերի խոսուն արտահայտություն նկատելով:

*«Այսօր առիթն ունենք մեկ անգամ եւս գոհունակ սրտով եւ արժանի գնահատանքով անդրադառնալու հավատակից մեր ժողովուրդների դարավոր բարեկամական հարաբերություններին, գիտական ու մշակութային կապերի հարուստ ավանդներին, որոնց ուրույն արտահայտությունն ենք գտնում Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի պատմության մեջ:*

*Սկզբնավորվելով Սանկտ Պետերբուրգի հաստատման առաջին տասնամյակներում՝ հայ համայնքն աճել ու ստվարացել է քաղաքի զարգացման հետ: Մեր ժողովրդի զավակներն իրենց մասնակցությունն են բերել Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքի բարօրության ու բարգավաճմանը, նաեւ՝ մշակութային առաջընթացին: Արժանանալով ռուսական բարեխնամ իշխանության հաճությանը՝ հայ համայնքը կազմակերպել է նաեւ իր հոգեւոր եւ ազգային կյանքը, կառուցել է եկեղեցիներ, սիրով ու հավատարմությամբ խնամել ու պահպանել հայոց լեզուն եւ հայ մշակույթը: Հայրենի ժառանգության հանդեպ մեր ժողովրդի զավակների այս հոգածությամբ եւ Աստծո առատ շնորհներով Սանկտ Պետերբուրգը, որ կրում է մշակութային շռայլ ու հարուստ ավանդներ, դարձել է նաեւ հայագիտության կենտրոններից մեկը: Սանկտ Պետերբուրգի հետ կապված են հայ տպագրության, հայ մատենագրության թարգմանությունների հիշատակներ, պատմական դժվարին ժամանակներում Հայաստանի ազատագրության հույսերի, ռազմական համագործակցության ծրագրերի ու համատեղ պայքարի նվիրական էջեր»*,- նշեց Վեհափառ Հայրապետն իր խոսքում:

*Շարունակությունը՝ էջ 4*



*Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանում բացված «Հայ-ռուսական հոգեւոր կապեր» գրքի ցուցահանդեսում*



*Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանում*

# ՀԵՀԵԿ-ի երկրորդ պատգամավորական ժողովը

Հուլիսի 7-10-ը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ Ծաղկաձորում անցկացվեց Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական կազմակերպության (ՀԵՀԵԿ) երկրորդ պատգամավորական ժողովը:

ՀԵՀԵԿ-ը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հովանու ներքո գործող կառույց է, որը համակարգում է երիտասարդության հետ իրականացվող Հայ Առաքելական եկեղեցու գործունեությունը:

ՀԵՀԵԿ-ի պատգամավորական ժողովին մասնակցեց 30 երկրից շուրջ 150 երիտասարդ:

Հուլիսի 9-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան եպս Հովհաննիսյանի եւ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս Քարամյանի, մեկնեց Ծաղկաձոր, ուր հանդիպում ունեցավ ՀԵՀԵԿ-ի պատգամավորական ժողովի մասնակիցների հետ:



Հանդիպման սկզբում ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանը, ով նաեւ պատասխանատուն է այս կազմակերպության, Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց պատգամավորական ժողովի մասնակիցներին: Հովնան սրբազանը երիտասարդների անունից երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ Եկեղեցու շուրջը համախմբված երիտասարդության հանդեպ ցուցաբերվող հայրական հոգատար վերաբերմունքի համար, ապա Նորին Սրբությանը տեղեկացրեց եռօրյա ժողովի արդյունքների մասին:

Այնուհետեւ հավաքված երիտասարդներին իր հայրապետական օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուրախություն հայտնելով, որ ՀԵՀԵԿ-ն իբրեւ կառույց կայացել է, ձեւավորվել է համախմբումների գեղեցիկ ավանդույթը, ինչը վստահություն է ներշնչում, որ եկեղեցասեր երիտասարդական այս շարժումը պիտի նոր թափ առնի եւ նորանոր անդամներով համալրի իր շարքերը: Նորին Սրբությունը կարեւորեց երիտասարդների ներկայությունը Եկեղեցում՝ նշելով, որ նրանք, հաղորդ դառնալով եկեղեցական կյանքին ու առաքելությանը, պիտի դառնան առաքյալները նոր ժամանակների, մեր հավատքի տարածման, ազգային սրբությունների, ավանդույթների եւ արժեքների քարոզչության: Հայոց Կաթողիկոսը հորդորեց երիտասարդներին հիշել Աստծուն եւ ապրել Նրա պատվիրաններով, որպեսզի զերծ մնան սայթաքումներից, սխալ ընթացքներից, այլ, ունենալով Աստծո պատգամներն իրենց առաջնորդող, լցվեն բարությամբ, սիրով, նախանձախնդրությամբ հավատքի, մեր Սուրբ Եկեղեցու եւ ազգային նվիրական արժեքների նկատմամբ: *«Եկեղեցու օրհնության ներքո գտնվող մարդիկ առանձնահատուկ շնորհի ներքո են: Նրանք Աստծո օրհնության, սիրո ու ողորմության ներքո են, եւ Աստծո Աջը միշտ նրանց հովանի է, զորակից եւ առաջնորդող: ...Մենք անշուշտ նախանձախնդիր ենք, որ մեր ժողովրդի զավակներն ամենքը՝ մանուկ, երիտասարդ, պատանի, տարեց, համախմբված լինեն մեր Եկեղեցու օրհնության ներքո, որովհետեւ լինել Աստծո հետ, Աստծով ապրել նշանակում է լինել զորեղ եւ կարող հանձնառությունների, բարի արարքների եւ հավատքի գործերի»*,- ասաց Նորին Սրբությունը: Հայոց Հայրապետը մաղթեց երիտասարդներին իրենց կյանքն ապրել աստվածսիրության եւ ազգասիրության վեհ գաղափարներով, որպեսզի ոչ մի երիտասարդ չշեղվի ճշմարիտ ճանապարհից եւ միշտ արժանանա երկնավոր Տիրոջ, հայրերի եւ գալիք սերունդների օրհնությանը: *«Մեր կյանքն ապահով եւ անվտանգ է, եթե մեր կյանքը եւ լինելությունը խարսխված լինեն այս երկու նվիրական արժեքների վրա»*,- նշեց Նորին Սրբությունը՝ վերստին հորդորելով ներկաներին այդ ոգով եւ գիտակցությամբ իրենց նպաստը բերել Հայոց Եկեղեցու առաքելությանը, ազգային կյանքի շինությանն ու լուսավոր ապագայի կերտմանը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց Հովնան սրբազանին՝ երիտասարդների նկատմամբ ցուցաբերվող առանձնահատուկ ուշադրության եւ կազմակերպության ազգանպաստ գործունեության համար, ինչպես նաեւ կենտրոնական գրասենյակի պաշտոնեությանը՝ ժողովի արդյունավետ կազմակերպման համար:

Հանդիպումից հետո Վեհափառ Հայրապետը զրույց ունեցավ աշխարհի տարբեր կողմերից հավաքված երիտասարդ պատվիրակների հետ, պատասխանեց նրանց հուզող հարցերին:

Հուլիսի 10-ին ՀԵՀԵԿ-ի 150 պատվիրակները, որ ներկայացնում էին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, Երուսաղեմի եւ Կ. Պոլսի պատրիարքությունների, Հայ Եկեղեցու 35 թեմերի եւ 6 հովվությունների երիտասարդական կազմակերպությունները, Մայր Աթոռ Սբ Էջմիածնում մասնակցեցին ուխտի Պատարագին:

Պատարագիչն էր ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ, ՀԵՀԵԿ-ի պատասխանատու Տ. Հովնան արք. Տերտերյանը: Պատարագի ընթացքում մատուցված քարոզում սրբազան հայրը խանդավառությամբ անդրադարձավ ՀԵՀԵԿ-ի երիտասարդաց ժողովին, որ աշխարհի տարբեր ծայրերից Մայր Աթոռում է համախմբել 150 երիտասարդի՝ մեծապես կարեւորելով երիտասարդների մասնակցությունը եկեղեցու կյանքին:



Պատարագի ավարտին երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի շիրմի մոտ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանները, լուսահոգի Հայրապետի քույր Եսթեր Սարգսյանը, ՀԵՀԵԿ-ի պատգամավորներն ու բազում ուխտավորներ:

Նույն օրը ՀԵՀԵԿ-ի ժողովի մասնակիցների համար Մայր Աթոռում կազմակերպվեց ընդունելություն, որի ընթացքում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց երիտասարդներին:

*Շարունակությունը՝ էջ 6*

# Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ուկրաինայի Գերագույն Ռադայի նախագահին



Հուլիսի 12-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ուկրաինայի Գերագույն Ռադայի նախագահ Վլադիմիր Լիտվինի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային Ժողովի փոխնախագահ Սամվել Բալասանյանի:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց երկու երկրների ու հավատակից ժողովուրդների ջերմ հարաբերություններին, միջխորհրդարանական կապերին ու համագործակցությանը: Վեհափառ Հայրապետն ու Ուկրաինայի Գերագույն Ռադայի նախագահը խոսեցին նաեւ հոգեւոր արժեքների կարեւորության, հասարակական կյանքում Եկեղեցիների միաբանող դերակատարության մասին:

Իր խոսքում Նորին Սրբությունը, ի դեմս պրն Լիտվինի, շնորհակալություն հայտնեց Ուկրաինայի իշխանություններին՝ հայ համայնքի եւ Ուկրաինայի հայոց թեմի նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար: Գոհունակությամբ արձանագրվեց նաեւ, որ Ուկրաինայում հայ համայնքին ընձեռված են բոլոր պայմանները՝ ազգային-եկեղեցական կյանքի լիարժեք կազմակերպման համար:

# Տեղի է ունեցել ԵՀԽ «Հավատք եւ կարգ» հանձնախմբի հերթական հանդիպումը

Հունիսի 27-ից հուլիսի 2-ը Մոսկվայում տեղի է ունեցել Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Հավատք եւ կարգ» հանձնախմբի հերթական հանդիպումը՝ «Իշխանության աղբյուրները եկեղեցում» խորագրով:

Այս ժողովում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էր «Էջմիածին» ամսագրի փոխխմբագիր Տ. Շահե աբեղա Անանյանը:

Հանդիպման հիմնական նպատակը «Վաղ Եկեղեցու հայրերի միջոցով Աստվածաշնչի մեկնության» ձեռնարկի ստեղծումն է, որը կոչված է հայրաբանական ավանդության կարճ ներածական դառնալու: Ձեռնարկը նախատեսվում է քրիստոնեական այն հարանվանությունների համար, որոնք ծանոթ չեն այդ ավանդությանը:

# Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը Վահագն Ստամբոլցյանի մահվան կապակցությամբ



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն հոգեւոր խորհրդի եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբանության անունից ցավակցություն է հայտնել երգեհոնահար Վահագն Ստամբոլցյանի մահվան առիթով:

Վեհափառ Հայրապետի ցավակցագրում մասնավորապես ասվում է. «Խոր ցավով տեղեկացանք Առաքելական մեր Սբ Եկեղեցու եւ մեր ժողովրդի արժանավոր ու տաղանդաշատ զավակ, երգեհոնահար Վահագն Ստամբոլցյանի մահվան մասին:

...Վահագն Ստամբոլցյանի աստվածաշնորհ կյանքը եղավ ամբողջական նվիրում հայ մշակույթին եւ երաժշտական արվեստին: Նա տասնամյակներ շարունակ գնահատելի նպաստ է բերել ազգային եւ հոգեւոր-մշակութային վերազարթոնքին, ինչպես նաեւ երգեհոնային երաժշտության դարավոր արժեքները մատուցել է բազմահազար հասարակությանը՝ իր ունկնդիրների հոգում զորացնելով սերը եւ նվիրումը հանդեպ հոգեւոր, սրբազան արժեքները:

Մեծ էր նաեւ լուսահոգի Վահագն Ստամբոլցյանի մանկավարժական վաստակը. նա երկար տարիներ անսպառելի կորովով ու նվիրումով դասավանդում էր Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ իր իսկ ջանքերով հիմնված երգեհոնի դասարանում՝ ծառայելով երաժիշտների նոր սերնդի պատրաստության շնորհակալ գործին: Մխիթարությամբ ենք հիշում, որ բարձր գնահատելով բարեհիշատակ Վահագն Ստամբոլցյանի վաստակը հայ երաժշտության եւ արվեստի անդաստանում՝ հայրապետական կոնդակով նվիրյալ հայորդուն շնորհել ենք Առաքելական մեր Սբ Եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղոթում ենք առ Ամենողորմ Տերը, որ Իր անսահման ողորմությամբ ու գթությամբ երկնային լուսե բարձունքներում հանգստություն պարգեւի հանգուցյալի հոգուն»:

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԵՂԻԱԶԱՐ Ա ԱՅՆԹԱՊՑԻ (1681-1691)

*Սկիզբը՝ թիվ 11-12*

Վարդան Հունանյանի գործունեությունն իր չարագուշակ ավարտին հասավ 1689 թ. հոկտեմբերի 10-ին՝ Լվովում գումարված գավառական ժողովի կամ Սյունհոդոսի որոշումների մեջ, որոնց համաձայն՝ Լեհաստանի հայոց եկեղեցիներում գործածվող ծեսերը համարվեցին Հայաստանյայց Եկեղեցու հայրերի կարծեցյալ մոլորություններ եւ Վարդան Հունանյանի ու նրա կարճամիտ համախոհների կողմից «ուղղվեցին», կազմվեցին նոր օրինակներ, որոնք ուղարկվեցին Հռոմ՝ տպագրվելու եւ հռոմեադավան հայերի շրջանում կիրառվելու համար: Այդ գործին իրենց մեծ նպաստն են բերում լատին քարոզիչ աբեղաներն ու Լեհաստանում պապի նվիրակ Գանդելմին, որը նախագահում էր ժողովում: Վերջինս որոշում է Աստվածատուր Ներսիսյան եպիսկոպոսին հանձնել սրբագրյալ ծիսարանները՝ «Պատարագատետրը», «Տոնացույցը», «Ժամագիրքը», «Շարականը» եւ «Մաշտոցը»՝ Հռոմ տանելու եւ տպագրելու համար:

Լվովի ժողովը Հայ Եկեղեցու համար ունեցավ ողբերգական հետեւանք: Խախտվել էր հայոց կաթողիկոսի իրավունքը, քանի որ ժողովում նախագահել էր պապի նվիրակը: Վարդանն այդ քայլով վերջնականապես խզեց լեհահայերի կապն Էջմիածնից, իսկ մինչ այդ թե՛ Նիկոլը եւ թե՛ Վարդանն ընդունում էին իրենց հպատակությունը Մայր Աթոռին: Փաստորեն՝ 1689 թվի հոկտեմբերի 10-ը դարձավ լեհահայերի՝ Էջմիածնից անջատվելու տարեթիվը: Այս իրադարձությունից հետո Մոլդավիայի, Վալախիայի եւ Բուկովինայի հայ գաղթականները բաժանվեցին Վարդան Հունանյանից եւ հավատարիմ մնացին ազգային Եկեղեցուն: Նույնիսկ այլեւայլ վայրերում գտնվող հռոմեադավան հայերը եւս քաղաքականապես անջատվեցին նրանից, եւ միայն Գալիցիան մնաց հռոմեադավան եպիսկոպոսին ենթակա:

Հայտնվելով այդօրինակ կացության մեջ՝ Վարդան Հունանյանը որոշեց իր ազդեցության տակ առնել Հունգարիայի մաս կազմող Տրանսիլվանիայում հաստատված հայ գաղթականներին: Սրանք այստեղ հաստատվել էին դեռ մինչեւ 1654 թիվը, սակայն բուն գաղթականությունը հաստատվեց 1672-ին, երբ Մոլդավիայի հունադավան իշխանն սկսեց հալածել հայադավաններին: Հայերի մի մասը հեռացավ Մոլդավիայից դեպի Տրանսիլվանիա: Դրանց մեջ էին Մինաս Չելիֆտարօղլու եպիսկոպոսը եւ Սուչովայի քահանա Եղիան: Ցավոք, առաջինին Վարդանը հաջողեց իր կողմը գրավել եւ նրա մահվանից հետո՝ 1691 թ. հուլիսի 30-ին, Տրանսիլվանիայի հայոց եպիսկոպոս ձեռնադրեց Օքսենտիոս Վերծերեսքոյին կամ Վրզարյանին, որը Բոտոշանի վարդապետն էր եւ ուսանել էր Հռոմի Պրոպագանդայի վարժարանում: Եկվոր հայ գաղթականները կազմակերպված չէին եւ կարոտ՝ Ավստրիայի իշխանությունների պաշտպանությանը, ուստի շատ հեշտությամբ դավանափոխ արեցին հունգարահայերին: 1691 թվին դավանափոխ եղավ նաեւ Եղիան՝ Սուչովայի քահանան:

Լավ չէր կացությունը Պարսկաստանի հայերի համար: Հակառակ իր նախորդների՝ շահ Սուլեյմանը մտադրվեց քրիստոնյաներին, մանավանդ հայերին, պարտադրել իսլամը: Հայերը, որ կորցրել էին իրենց հայրենիքը, այժմ զրկվեցին դավանական հանգստից, ինչն ունեին Շահ-Աբասի ժամանակներից: Գաղթական հայերի կենտրոնն Ամենափրկչի վանքն էր, որը նշանավոր էր արժանավոր առաջնորդներով: Ըստ ոմանց՝ Խաչատուր Կեսարացուն հաջորդեց Դավիթ Ջուղայեցին, սակայն իրականում հաջորդել էր Սիմեոն Ջուղայեցին: 1655-ին արդեն Դավիթն էր, որին գովեստներ են շռայլել ժամանակակիցները: Նա վերաշինեց Ամենափրկչի վանքը (ավարտվեց 1664-ին): Նա 40-ի չափ աշակերտներ հավաքեց, որոնք հետագայում պարսից կրոնական բռնաճնշումների ընդդիմադիրները դարձան: Նրանց մեջ հատկապես նշանավոր էին Ստեփանոս Ջուղայեցին, որ հաջորդեց Դավթին, Հովհաննես Մրքուզը, որը հռչակվեց մահմեդական օրենսգետների եւ անգամ պարսից շահի հետ ունեցած քրիստոնեական հավատքի վերաբերող ջատագովական վիճաբանություններով: Հիշվում են նաեւ Ալեքսանդրը, Խաչատուրը, Մինասը, Անդրեասը, Միքայելը, Մարկոսը, Հովսեփը, Սիմեոնը եւ Հովհանը, որոնք վարդապետներ էին՝ հետագայում հասած եպիսկոպոսական աստիճանի, բացի Մրքուզից, որը կամովին հրաժարվել էր այդ աստիճանից:





Երբ 1680 թվին Հակոբ կաթողիկոսը գտնվում էր Կոստանդնուպոլսում, Յոհան անունով մի աբեղա ստիպում է նրան, որ իրեն հանձնի Փերիա գավառի առաջնորդությունը՝ Հազարջրիպի վանքով հանդերձ: Եվ երբ կաթողիկոսը չի ուզում դա անել, նա սպառնում է հակառակ դեպքում ուրանալ քրիստոնեությունը: Հակոբը ձեւ է անում, թե զիջում է, բայց Էջմիածին լուր է ուղարկում, որ նրան գալուն պես ձերբակալեն, նետեն Սեւանի կղզին, որպեսզի այդտեղից նա դուրս չգա: Այդպես էլ արվում է, եւ Յոհանը մի քանի տարի մնում է Սեւանում: Սակայն նրան հաջողվում է փախչել եւ գաղտնի գալ Փերիա եւ հաստատվել Հազարջրիպի վանքում: Այդ մասին իմանում են Նոր Ջուղայում, եւ Ստեփանոս վարդապետը, որ հաջորդել էր Դավթին, Աղաբիր Շահխաթունյանց գյուղապետն ու ջուղայեցիների առաջնորդները գալիս են, ծեծի ու խոշտանգումների ենթարկում Յոհանին եւ բանտ նետում: Յոհանին հաջողվում է այդտեղից էլ փախչել եւ դիմելով պարսիկներին՝ ընդունել իսլամ: Նա ստանում է Մեհմեդ-Ալի բեկ կամ Շեյխ-Մումին անունը: Նա հարմար առիթ էր փնտրում Ստեփանոսից ու մյուսներից վրեժ լուծելու համար: Այդ մասին հաղորդող տեղեկությունները հակասական են, ուստի ժամանակագրության հարցերին չենք անդրադառնում: Լոկ նշենք, որ Շեյխ-Մումինը Սուլեյման շահի մոտ մեղադրեց Ստեփանոս վարդապետին, որին շահը բանտարկել տվեց: Ձերբակալվեցին շատ այլ վարդապետներ, քահանաներ, որոնք ենթարկվեցին տանջանքների: Նրանց բանտում պահեցին ավելի քան մեկ տարի եւ ազատեցին՝ 1000 թուման տուգանք վերցնելով հայ մեծամեծներից: Հայերը խոստացան նաեւ տարեկան 300 թուման տուգանք վճարել: Տուգանքը վճարվում է մինչեւ 1691 թիվը, եւ 1692 թվին Ջուղայի գյուղապետ Ավետիսը փակում է այն: Այս ամենը եղավ Եղիազար կաթողիկոսի շրջանում, եւ զարմանալի է, որ նրա անունը բնավ չի հիշատակվում:

Այս շրջանում է եղել Հովհաննես Մրքուզի գիտական եւ կրոնական ջատագովությունների մի մասը, ինչը նա արել է՝ պաշտպանելու համար քրիստոնեական վարդապետությունը: Նա իր ջատագովությունները կատարել է մասամբ Սուլեյման եւ հիմնականում Հուսեյն շահերի օրոք, որը 1694 թվին հաջորդել էր հորը: Նա իր ջատագովությամբ հիացնում եւ զարմացնում է շահին ու իսլամ հոգեւորականներին:

Հետաքրքիր է, որ հիշատակված այս իրադարձությունների շրջանում խոսք անգամ չկա Եղիազար կաթողիկոսի միջամտության կամ գործակցության մասին, որն իրավունք է տալիս Մ. Օրմանյանին եզրակացնելու, որ Եղիազարը որքան ձեռներեց էր եւ բազմակողմանի գործունեության ձգտող, ապա նույնքան հանգիստ էր պաշտոնավարության շրջանում: Դժվար է ասել, թե դա արդյունք էր տարիքով բացատրվող հոգնածության, հուսախաբության կամ հիասթափության: Պատմագիրները եւ հիշատակարանները Եղիազարի գործունեությունն առավելապես ներկայացնում են Մայր Աթոռի նյութական եւ բարեկարգման խնդիրների հետ կապված: Նոր ուսումնասիրողներից միայն մեկն է, որ Եղիազարին համարում է Արեւմուտքի հետ հարաբերվելու կողմնակից եւ լատին հոգեւորականների նկատմամբ հաշտ վերաբերմունք ունեցող: Որ իբր նրանց թույլատրել է քարոզել հայոց եկեղեցիներում եւ արտոնել 1686 թվին վախճանված լատին միաբան Ռուաբեղային մեծ շուքով թաղել հայոց գերեզմանատանը: Նա շատ հակամետ չի եղել հռոմեադավանությանը, սակայն չի կարելի համաձայնել Ավետիք Եվդոկացու հետ, թե Եղիազարը եղել է լատինամետ: Ավետիքի նման եզրակացությունը կապվում է հավատաքննական բանտարկության մեջ դավանափոխությամբ ազատություն ձեռք բերելու նյութի հետ, ինչն իրականում եղել էր հարկադրանքի ազդեցության տակ: Նա կարող էր համարձակ հարաբերությունների մեջ մտնել արեւմտականների հետ, սակայն դա երբեք իրավունք չի տալիս նրան լատինամետ համարելու: Հավանաբար իր նախորդի՝ Հակոբի պես միտք է ունեցել Էջմիածնից մեկնել Կոստանդնուպոլիս՝ եվրոպացիների հետ հեշտությամբ բանակցելու համար: Անշուշտ, նպատակը եղել է Արեւմուտքից քաղաքական օգնություն ստանալը: Թերեւս մեկնել է 1691 թվին, սակայն հասնելով Կարին՝ վերադարձել է՝ հաշվի առնելով ճանապարհորդության վտանգավորությունը, քանի որ գահընկեց էր եղել Մեհեմմեդ Դ սուլթանը, եւ երկիրը բռնված էր խռովություններով ու ապստամբություններով: Դրանում հատկապես աչքի ընկան Եեկեն Օսման եւ Կետուք Մեհեմմեդ փաշաները: Այդ խռովվիճակը շարունակվեց 6 տարի՝ Սուլեյման Բ եւ Ահմեդ Բ սուլթանների գահակալության շրջանում: Սուլեյման Բ-ն մահացավ 1691 թ. հուլիսի 14-ին, եւ նրա եղբայրը՝ Ահմեդ Բ-ն հաջորդեց նրան, սակայն երկիրը հանգիստ չէր, եւ Եղիազարը չէր վստահի ցամաքային ճանապարհորդություն կատարել եւ ոչ էլ հաջողություն հուսալ Կ. Պոլսում: Վերադառնալուց հետո նա մահացավ 1691 թվի օգոստոսի 8-ին՝ պաշտոնավարելով 9 տարի. թաղվեց Ս. Գայանեի յուրաշեն գավթի աջ կողմում:

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր*

# ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 9-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի (Աստվածաբանական համալսարան) եւ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի ամավերջյան հանդիսությունը:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2010-2011 թթ. ուսումնական տարվա ամփոփիչ հաշվետվությամբ հանդես եկավ ճեմարանի տեսուչ Տ. Գեւորգ վրդ. Սարոյանը: Տեսուչ հայր սուրբն իր խոսքում անդրադարձավ ճեմարանի ձեռքբերումներին՝ խորին երախտագիտություն հայտնելով Վեհափառ Հայրապետին՝ ցուցաբերած հայրական խնամքի եւ հոգատարության համար: Հաշվետվությամբ հանդես եկավ նաեւ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի տեսուչ Տ. Շնորհք աբեղա Սարգսյանը:

Հանդիսության ընթացքում ճեմարանականները հանդես եկան հոգեւոր եւ ազգային երգերի կատարումներով ու ասմունքով, որից հետո ուսանողության անունից խոսք ասաց Գագիկ սրկ. Հակոբյանը: Այնուհետեւ բարձր առաջադիմություն ցուցաբերած սաները Վեհափառ Հայրապետից ստացան խրախուսական նվերներ:

Հանդիսության ավարտին ներկաներին իր գնահատանքը եւ օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց ճեմարանների տեսչական կազմին, դասախոսներին եւ պաշտոնեությանը՝ կատարված աշխատանքների համար: *«Փառք եւ գոհություն ենք բարձրացնում առ Աստված, որ Գեւորգյան եւ Վազգենյան հոգեւոր հաստատությունների պատմությունը հարստացավ եւս մեկ ուսումնական տարվա գեղեցիկ ձեռքբերումներով, ձեռքբերումներ, որոնք արժանագրված արդյունք են նվիրյալ ջանքերի եւ աշխատանքի մեր տեսչության, դասախոսական կազմի ու նաեւ մեր սաների»*,- նշեց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը, շնորհավորելով Գեւորգյան հոգեւոր ճեմարանի շրջանավարտ քանվեց սաներին, վստահություն հայտնեց, որ նրանք իրենց ծառայությամբ պիտի փառք եւ ուրախություն հավելեն հայ ժողովրդին ու Հայոց Եկեղեցուն: Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես նշեց, որ ուսումնական տարվա ընթացքում արձանագրված արդյունքները լավատեսություն են ներշնչում դեպի հոգեւոր հաստատությունների վաղվա օրը: Նորին Սրբությունը հորդորեց երիտասարդներին Ս. Էջմիածնի փառքի լույսի շողի կրողը լինել, որպեսզի նրանց հոգիներից ու կյանքից լույս տարածվի, եւ լուսավորվի հայ ժողովրդի ներկա կյանքի եւ ապագայի ուղին: *«Թող այդ լույսը ձեր մեջ այնպես շողարձակի, որ մարդիկ ձեր կյանքում ու ձեր գործերի մեջ տեսնեն ճառագայթումն այդ լույսի եւ փառավորեն մեր Եկեղեցին, նրա առաքելությունն ու դերակատարությունը մեր կյանքում»*,- մաղթեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հայցելով Բարձրյալին՝ զորացնելու Հայ Եկեղեցու կրթական հաստատությունները, որպեսզի շարունակաբար բարի արգասիքներ ապահովեն մեր Եկեղեցուն ու մեր ժողովրդին:

Հանդիսությունը փակվեց Նորին Սրբության «Պահպանիչ» աղոթքով:




*Մեծ Հայրենականում զոհվածների հուշարձանի մոտ*

հաջորդեց կոմիտասյան «Տէր ողոր մեա»-ն, ապա հայրապետական «Պահպանիչ» աղոթքը:

Գարեգին Բ Հայրապետը ծանո թացավ նաեւ Սամվել Մովսիսյանի հովանավորությամբ Վսեվոլոժս կում կառուցվող հայկական հան Ներսիսյանի, հայրապետական շքախմբի եւ Ռուսաստանի թեմի հայոց քահանայից դասի:

Օդանավակայանում Նորին Սր բությանը դիմավորեցին Լատվիայի հոգեւոր հովիվ Տ. Խոսրով քհն. Ստեփանյանը, հայ համայնքի նա տանքով ներկայացրեց հայ հա մայնքի կարեւոր ներդրումը Լատ վիայի կյանքում եւ շնորհավորեց Նորին Սրբությանը Ս. Գրիգոր Լու սավորիչ եկեղեցու կառուցման եւ օծման առիթով:

**Հունիսի 30-ին** Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսապետեց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծ ման արարողությունը, որին ներկա էին Ռուս Ուղղափառ Եկեղեցուց Ա լեքսանդր մետրոպոլիտը, Լյութե րական Եկեղեցուց Պավել եպիսկո պոսը, քաղաքային իշխանություն ների ներկայացուցիչներ եւ ուխ տավորներ՝ ժամանած նաեւ Էստո նիայից եւ Լիտվայից:

Շարականների, սաղմոսների ու աղոթքների ուղեկցությամբ օծվե ցին եկեղեցու զանգակատան խա չը, ս. Սեղանը եւ սյուները: Օծման արարողությունից հետո Նորին Սր բությունն իր օրհնությունն ու պատգամը բերեց ներկա ժողովր դին: Վեհափառ Հայրապետը գո հունակություն հայտնեց հովվապե տական այցով Լատվիայի Հանրա պետությունում գտնվելու առիթով: *«Ցնծում են այսօր Հայ Առաքելա*



*Ս. Մարիամ Աստվածածին հայկական եկեղեցին Վսեվոլոժսկում*

Լատվիայի հոգեւոր հովվին եւ եկե ղեցական վարչության անդամնե րին՝ իրենց անձնվեր ծառայու թյանց համար՝ ի պայծառություն Լատվիայի հայ համայնքային կյանքի:

Վերստին հայրապետական իր օրհնությունը բերելով ներկա ժո ղովրդին Լատվիայում իրականաց վող բարեջան գործունեության եւ ազգային կյանքում դրսեւորած նա խանձախնդրության համար՝ Ամե նայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց հայորդիներին քրիստոնեական զո րեղ հավատքով եւ հավատի գործե րով շարունակել Լատվիայի նվի կով, Ռոբերտ Հովհաննիսյանին, Էռ նեստ Բերնիսին, Սերգեյ Ավետի սյանին, Աղան Ավետիսյանին, Արա Դավոյանին, Պավել Սայադովին, Ա տոմ Խաչատրյանին, Մխիթար Մխիթարյանին, Վաչագան Պողո սյանին, Արթուր Իսախանովին, Ռուստամ Ասոյանին, Ենոք Կոսյա նին եւ Սուրեն Պարսամյանին:

Երեկոյան, ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, համայնքի կողմից տրվեց պաշտոնական ընթ րիք, որին մասնակցում էին հայ հա մայնքի անդամներ, Լատվիայի իշ խանությունների եւ քույր Եկեղեցի ների ներկայացուցիչներ:

# Այցը Սանկտ Պետերբուրգ եւ Լատվիա

րակրթական դպրոցի շինարարու թյան ընթացքին: Կոլտուշի մարզ կենտրոնում Նորին Սրբությունը ծաղկեպսակ զետեղեց Մեծ հայրե նական պատերազմի ընթացքում զոհվածների հուշարձանին, կա տարվեց հոգեհանգստյան աղոթք:

Նույն օրը, **ավարտելով հովվա պետական այցը Սանկտ Պետեր բուրգ, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Լատվիայի Հանրապետություն:**

**Հունիսի 29-ին** Ն.Ս.Օ.Տ.Տ. Գա րեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցով ժամանեց Լատվիայի Հանրապետության մայրաքաղաք Ռիգա՝ ուղեկցու թյամբ Ռուսաստանի եւ Նոր Նախի ջեւանի առաջնորդ Տ. Եզրաս եպս խագահ Առնո Տեր-Սահակովը, Լատվիայի Հանրապետության ար տակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Գալոյանը, հայ համայնքի ներկա յացուցիչներ:

**Նույն օրը**՝ երեկոյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ու նեցավ Լատվիայի Հանրապետու թյան նախագահ Վալդիս Զատլեր սի հետ: Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն իր երախտագիտու թյունը հայտնեց նախագահին՝ հայ համայնքի հանդեպ Լատվիայի իշ խանությունների կողմից ցուցա բերվող մշտական հոգատար վե րաբերմունքի եւ ուշադրության հա մար:

Իր խոսքում տիար Զատլերսը, ողջունելով Ամենայն Հայոց Կաթո ղիկոսի այցը Ռիգա, բարձր գնահա



*Լատվիայի նախագահ Վալդիս Զատլերսի հետ*



*կան Սուրբ Եկեղեցին եւ Լատվիա յում բնակություն հաստատած մեր հավատավոր զավակները, քանզի այսօր իր աստվածային օծումն ստացավ սբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի անունը կրող հոյա կերտ այս տաճարը:*

*Փառք եւ գոհություն ենք առ Աստված բարձրացնում, որ Մեր ժո ղովրդի զավակները մշտապես ի րենց հոգում կրում են եկեղեցաշի նության աստվածահաճո գործը: Այս Եկեղեցու կառուցումով պիտի նորոգվի լատվիահայ համայնքի հո գեւոր-մշակութային կյանքը: Աստված, որ բնակվում է մեր հոգիներից ներս, հրաշափառ այս եկեղեցու ներկայությամբ, Լատվիայի նվիրա կան հողում պիտի բնակություն հաստատի լատվիահայ համայնքա յին կյանքից ներս՝ հեղելով հայրե նասիրության, մարդասիրության եւ ազգասիրության շնորհները հայոր դյաց սրտերում եւ նրանց ձեռաց ու մտքերի գործերի վրա, քանզի եկե ղեցին, որ օծեցինք սրբալույս մյու ռոնով եւ մեր հայրերից ավանդված աղոթքներով, դադարում է միայն նյութական, առարկայական կա ռույց լինելուց, այն դառնում է ոգե ղեն իրականություն»*,- ասաց Նորին Սրբությունը: Անդրադառնալով Ռի գա քաղաքի փոքրաթիվ հայ հա մայնքի կազմակերպված եւ աշխա տասեր նկարագրին եւ Բալթյան եր կրներում առաջին հայկական եկե ղեցու կառուցմանը՝ Վեհափառ Հայ րապետը նշեց. *«Պատահական չէ, որ որտեղ էլ հանգրվանել է հայը, իր առաջին մտածումն է եղել եկեղեցի կառուցել: Մեր զավակները քաջ գի տակցությունն ունեն այն անհերքելի իրականության, թե քրիստոնեու թյունն է արտահայտում մեր հոգե ւոր ինքնությունը, եւ թե Հայ Առաքե լական Եկեղեցին է ձեւավորում ազ գային քրիստոնեական իր դիմագի ծը: Տեսնում ենք, թե ինչպես է հայն իր տունը, եկեղեցին ու դպրոցը կեր տել իրեն հյուրընկալած երկրներում եւ, վայելելով տեղի իշխանությանց բարյացակամ խնամքն ու հոգատա րությունը, աստվածապավինու թյամբ սկսել իր նոր կյանքն ու գոր ծունեությունը՝ որպես արժանավոր, հպարտ քաղաքացի այդ երկրի»*:

Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց թեմակալ առաջնորդ Եզրաս եպիսկոպոսին,



րական հողում բարեզարդել իրենց ազգային կյանքը:

Նորին Սրբությունն իր խոսքից հետո նորաօծ եկեղեցուն նվիրեց սրբապատկեր: Հավարտ արարո ղության Ս. Գրիգոր Լուսավորիչ ե կեղեցում մատուցվեց անդրանիկ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան եպս Հովհաննիսյանը:

**Նույն օրը** Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետա կան օրհնության գրեր շնորհեց ե կեղեցու կառուցման գործում մեծ ավանդ ունեցած բարերարներ Առ նո Տեր-Սահակովին, Արտակ Դա նիելյանին, Էդուարդ Տեր-Սահա

**Հուլիսի 1-ին** Նորին Սրբու թյունն այցելեց Ռուս Ուղղափառ Ե կեղեցու Սբ Ծննդյան մայր տա ճար, ուր նրան ողջունեց Ռիգայի եւ համայն Լատվիայի մետրոպոլիտ Ալեքսանդրը: Մետրոպոլիտը Վե հափառ Հայրապետին մանրա մասն ծանոթացրեց տաճարի նո րոգչական այն աշխատանքներին, որ կատարվել էին հետխորհրդային շրջանում: Ապա Հայոց Վեհափառն իր օրհնության խոսքն ուղղեց ներ կաներին ու հավատացյալներին:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ա վարտելով հովվապետական այցը, վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջ միածին:



# ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

## (1899-1937)



*Սկիզբը՝ 9-12*

Ծիրանի փողը հազարամյա եղեգան փողն է, որից ծնվեց *«հուրհեր պատանեկիկը»*: Հազրոյի ծիրանի փողից էլ էր *«ծուխ ելանում, բոց ելանում»*. դա ծննդավայրի կարոտի ծուխն էր, կորստի ցավի բոցը, որից դարձյալ մի *«խարտյաշ պատանեկիկ»* պիտի ծնվեր, փրկեր երազի ու առասպելի վերածվող հայրենի եզերքը:

Լեռնային ջինջ ու պայծառ, սառն ու առողջ օրվա զրնգոցով, հանգած մոխիր դարձած սուսամբարի տերեւների վեր հուշով է սկսվում պատմվածքը: Վերհուշն աստիճանաբար որոշակիացնում է լեռնային գյուղի մարդկանց: Ձյանբերդի ճանապարհին հեղինակը հանդիպում ու մի քանի բառ է փոխանակում գյուղի ջրբաշխի հետ. *«Մըր բախտ կապած ենք գդալ ջրի... Մեր հողեր լէ ցրվուկ: Էհ, հացի տեղ արուն շատ կերանք: Հիմա որ սերմ թալինք, սերմ վերունք, էլի գոհություն»*: Միանգամից բացվում է դժվար ճակատագրի տեր մարդկանց կյանքի պատկերը: Այնուհետեւ՝ *«Մենակ մեր սահման նեղ է, շնորհիվ սահմանի նեղության, ժողովուրդ կնեղվի»*:

Աստիճանաբար բացվում է ծննդավայրը կորցրած սասունցիների ողբերգությունը, ինչը խորհրդանշում է ամբողջ արեւմտահայության ճակատագիրը: Կորցրած երկիր, կորցրած սահմաններ, եղեռնի ու բռնագաղթի մնացորդներին վիճակված քարե դաշտ ու մի բուռ քարե հող: Պատմական ծննդավայրից հալածված մարդիկ հավաքվել են իրար գլխի, քարը մաղում հող են դարձնում, հողը՝ հաց, իսկ ազատ ժամերին երգում են իրենց հին ու տխուր, նաեւ մարտական ու խրոխտ երգերը, պարում լեռնականների իրենց հպարտ պարերը, որոնք պար չեն սոսկ, այլ կռիվ ու պայքար:

Իսկ Հազրոյի նվագի կանչերը ոչ միայն քաղցրալուր մեղեդիներ էին, այլեւ *«կարոտի հնչյուններ՝ վերադարձի, վերջին հույսի»*: Այդ նվագը հոգու ձայն էր. *«Հաղ մի երթամ տեսության մըր քարերին, մըր ծորերին, մըր Մարութա բանձր սարին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարդերու, նստիմ անուշ խոտերու վրեն, հանց գառներ մարդիկ նստեն իմ չորս բոլոր, երգեմ էնոնց խաղաղության զիմ երգեր, մարդիկ հալալ-զուլալ ախպրտոց պես գրկեն ·զիրար, չեղնի ոչ տեր, ոչ մշակ, ոչ թուր, ոչ բռնություն: Փչեմ զիմ ծիրանի փող, էլման ծուխ բանձրանա եր դիկներեն, խմեմ մեր լուս աղբըրներեն, զիմ քրտինք կաթա մըր քարերու վրեն, մըր Մարութա բանձր սարի ամպ թող լիզա զիմ սիվտակ ոսկորներ»*: Իսկ թե ո՞ւմ պիտի ժառանգի իր ծիրանի փողը, Հազրոն ունի միմիայն մեկ պատասխան. *«Զիմ փող կիտամ զիմ քաջարծիվ թոռնիկին»*: Այսինքն՝ ժառանգաբար պիտի ծխեցնել հայրենիքի կարոտը, մինչեւ բացվեն հուսո դռները: Հազրոյի անունից հայրենիքի անկորնչելի հիշողությունն էր ավանդում Բակունցը, ծիրանի փողը պահ տալիս ժամանակներին:

Լեռների ուսին դրած Հազրոյի վիթխարի ծիրանի փողով Բակունցը հնչեցնում է «մեր արդար երգերը», հնչեցնում է մասիսահայաց լեռներից, որտեղից պարզ երեւում են Հայկական պարը, Արարատյան դաշտի գյուղերը, քաղաքների լույսը, որտեղից երեւում է նաեւ կորուսյալ ծննդավայրը՝ նախնիների, բոլոր բռնագաղթվածների երկիրը: Նրանք ամեն ինչ տեսնում են ոչ միայն պարզ հայացքով, այլեւ ոգու աչքերով, որովհետեւ նախնիների ստվերները հեռվից կանչում ու ձեռքով են անում նրանց:

**Պատմվածքների արվեստը:** Բակունցի պատմվածքներն ի հայտ են բերում տեսակի ինքնուրույնացման առանձնահատկություն: Ընդհանրապես տեսակների հանդեպ գրողն ուներ յուրահատուկ վերաբերմունք, որպես ելք փակուղուց՝ նշում էր. *«Որտե՞ղ է ճշմարիտ ուղին. վերադարձ դեպի սկզբնաղբյուրները, դեպի ժողովրդական ստեղծագործությունը... դեպի ժողովրդական ստեղծագործության իսկական, նոր արմատները»*: Սկզբնաղբյուրը ժողովրդի բնական, անխաթար կեցությունն էր, որ մոտենում է կյանքի ու բնության, զգայությունների ու ապրումների նախաստեղծ հիմքերին: Դա ե՛ւ կուսական բնությունն է, ե՛ւ այդ բնության մեջ ապրող բնական մարդը՝ ինչպես նախրապան Պետին կամ Խոնարի աղջիկը:

Բակունցն ստեղծեց պատմվածքի իր տեսակը, որը լեզվաոճական առանձնահատկություններով հանդերձ՝ բնութագրվում է նաեւ իր կառուցվածքային յուրօրինակություններով՝ զգացմունքային խտացվածության ու կենսական փաստի համադրությամբ: Այնուհետեւ՝ բակունցյան պատմվածքներում անբաժանելի միասնության մեջ են բնաշխարհն ու հերոսների ներաշխարհը: Այդ երկու աշխարհի սահմանագիծը միացնող հանգույցում էլ կանգնած է գրողը, այդ դիտակետից էլ նայում է հավերժական բնությանն ու մարդուն: Բակունցի արծակն առանձնանում է նաեւ «բառերի ժլատ տնտեսումով», ճշգրիտ բառի ու դիպուկ նկարագրության անվրեպությամբ:

Լեռնային աղբյուրների պես մաքուր ու թափանցիկ են Բակունցի պատմվածքները, լեռնային մարդկանց բնավորությունների պես պարզ ու հստակ, բայց հոգեբանորեն խոր, քանի որ այդպիսին է նրանց տեսել ու ճանաչել գրողը: Մեծ աշխարհի համար Բակունցը բացեց մթնաձորյան աշխարհի *«հազարամյա գիրքը»*:

**Վեպերն ու վիպակները:** Որքան որ Բակունցը նրբագեղ ու խորունկ է պատմվածքներում, նույնքան ընդգրկուն ու ծավալվող է վեպերում ու վիպակներում: Արծակի մեծ ձեւերի մեջ նա նույնքան վարպետ է, որքան մանրաքանդակ դրվագումների: Վկայությունն ավարտուն երկու վիպակ է՝ «Հովնաթան Մարչ» (1927), «Կյորես» (1936), ըստ վկայությունների՝ ավարտված, բայց հատվածաբար մեզ հասած երեք վեպ՝ «Կարմրաքար» (1929), «Որդի որոտման» (1932), «Խաչատուր Աբովյան» (1934-1935):

Այս ստեղծագործություններում մի նոր հայացք է բացվում՝ ուղղված հայոց աշխարհին: Հայրենիք՝ ահա՛ կորստի ցավով, կարոտի արցունքով հարազատացած այն մի բուռ հողը, որը գրողի հենակետն է, որից դուրս ավարտվում է նրա հոգեւոր քարտեզի սահմանը: Այս մտայնությունը շատ սուր էր 1920-1930-ական թթ., երբ դեռ կտրված ձեռքի պես անանց էր Արեւմտյան Հայաստանի կորստի ցավը, խցանված՝ վերագտնումի հույսը: Այդ զգացողությամբ իրենց կորուսյալ հայրենիքի ցավը երգեցին Չարենցը, Մահարին, Թոթովենցը: Իսկ պահպանվածն ավելի թանկ սիրով գուրգուրեցին Արմենն ու Բակունցը:

«Կյորես» վիպակը գրապատմական այս մթնոլորտի ծնունդ է, գեղարվեստական այն ուղղվածության արգասիք, որը կոչված էր քարտեզագրելու մեծ հայրենիքի կորուսյալ ու պահպանված եզերքները: Կարոտի երգ է հյուսում Բակունցը՝ աչքի առաջ ունենալով հայրենի գյուղաքաղաքի անդառնալիորեն հեռացած անցյալը, առասպելախառն պատմությունների խորհրդավոր քողով վարագուրված հնօրյա կյանքն ու սովորությունները: Եվ պատահական չէ, որ Գորիսը ներկայանում է Կյորես անունով, որ իրար են հակադրվում հին բնակավայրը՝ Շենը, եւ նոր քաղաքը, հին ու նոր բարքերը, անգամ՝ լեզուն: Եվ դա այն աստիճանի, որ Շենում ապրողները կոչվում են բնիկներ, իսկ Գորիսում ապրողները՝ օտարական-ղարիբականներ. *«Այդպես ամեն ինչով տարբեր էին Գորիսն ու Կյորեսը, մանավանդ Շենը՝ Կյորեսի միջնաբերդը: Տարբեր էր նրանց հավատը: Նրանք ապրում էին կողք կողքի, նրանց միջեւ կռիվն անպակաս էր, հին կռիվը, ինչպես հին էր ձորը, ձորի գետը»*: Բայց հինն անդառնալիորեն հեռանում էր՝ ալիքվելով կարոտի վերակրկնվող մի նոր կանչով:

Ուրեմն, կարոտի կանչ՝ ուղղված բոլորին՝ անուն առ անուն, ամեն ինչի: Ոչինչ, ոչ մեկի չմոռանալու պայմանով էլ Բակունցը հյուսում է իր ասքը: Եվ ամենեւին էլ սովորական չէ, որ «Կյորեսի» պես համեմատաբար փոքրածավալ երկում հիշատակվում է շուրջ 150 հերոսի անուն, ովքեր բոլորն էլ բնութագրվում են ու կերպավորվում: Միաժամանակ հիշատակվում են բազմաթիվ տեղանուններ, գյուղաքաղաքի առօրյան ստեղծող «միջավայրեր»՝ շուկան, խանութները, փողոցները, տները, որոնք բոլորն էլ նկարագրվում են իրենց որոշակի ուրվագծով:

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

## ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդն ընդունեց ԱՄՆ ՊՆ պետքարտուղարի փոխտեղակալին

Հունիսի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպս Աբրահամյանն ընդունեց ԱՄՆ ՊՆ պետքարտուղարի փոխտեղակալ Սելեստե Վոլլանդերին եւ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան զինվորական կցորդ, գնդապետ Քենդլ Պարկսին:

Ողջունելով հյուրերի այցը հայոց հոգեւոր կենտրոն՝ սրբազան հայրն իր օրհնությունը բերեց նրանց եւ ներկայացրեց ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության գործունեությունը եւ առաջիկա ծրագրերը:

Մեծապես կարեւորելով հոգեւորականի ներկայությունը բանակում՝ ԱՄՆ ՊՆ պետքարտուղարի փոխտեղակալը պատրաստակամություն հայտնեց կազմակերպել փոխադարձ այցելություններ՝ ԱՄՆ ԶՈՒ հոգեւոր ծառայության եւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության միջեւ փորձի փոխանակման եւ համագործակցության ձեւավորման նպատակով:

Պատվիրակությունն այցելեց նաեւ Մայր Աթոռի թանգարաններ:

## ՀԵՀԵԿ-ի երկրորդ պատգամավորական ժողովը

*Սկիզբը՝ էջ 2*

Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց երիտասարդների Մայր Աթոռ այցի առիթով. *«Ձեր այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին արտահայտում է ձեր նախանձախնդրության ոգին, ձեր սերը հանդեպ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, ազգային մեր արժեքները եւ Հայրենիքը: Նախանձախնդիր եք, որպեսզի կարողանաք մոտ լինել այն ակունքներին, որոնցից հագեցնելով ձեր պապակ սրտերը՝ պիտի զորացնեք ձեր հոգին, ձեր միտքը՝ լինելու համար արժանավոր հայորդիներ»*:

Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ այցը ոչ միայն խանդավառություն կբերի երիտասարդների հոգիներին, այլեւ հոգու նորոգություն՝ այլ կերպ ընկալելու իրենց կյանքը եւ գնահատելու առաքելությունը համայնքային եւ ազգային կյանքում: Նորին Սրբությունը հորդորեց նրանց ոգեւորությամբ, խանդավառությամբ ու նախանձախնդրությամբ իրենց մասնակցությունը եւ ներդրումը բերել իրենց համայնքների



կյանքին, որպեսզի հայ կյանքը լինի աշխույժ, հայ համայնքը լինի ավելի կենսունակ ու գործունյա, իսկ աշխարհասփյուռ համայնքներում հայորդիները լինեն ավելի նախանձախնդիր իրենց ազգային արժեքների, ինքնության պահպանության գործում՝ այդպիսով իրենց ուխտը կատարելով Հայրենիքի, Ս. Էջմիածնի եւ մեր հայրերի սուրբ հիշատակի առջեւ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերստին իր գնահատանքը հայտնեց երիտասարդներին այն գիտակցության եւ ոգու համար, որ առաջնորդել է նրանց առ Եկեղեցի, փարված մնալու ազգային սրբություններին, ազգային ավանդություններին ու արժեքներին:

Նորին Սրբությունը նաեւ իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Հովնան սրբազանին՝ ՀԵՀԵԿ-ի կայացմանն ուղղված իր ջանքերի համար, ինչպես նաեւ բոլոր առաջնորդներին ու հովիվներին, ովքեր համախումբ են պահում հայ զավակներին ազգային հաստատությունների, եկեղեցիների շուրջ, նրանց ոգեւորում ու խանդավառում ազգային ապրումներով եւ զգացումներով, ազգային ինքնության գիտակցությամբ:

## Կից մենյակում

# ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ
# «ՏԱՍԸ ՄՆԱՍՆԵՐԻ ԱՌԱԿԸ»

*(Ղուկ. ԺԹ 12-27)*

Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

**- Տե՛ր հայր, մեր նախորդ զրույցի ժամանակ ասվեց, որ «Տասը մնասների առակը» շատ նման է Մատթեոսի Ավետարանում հանդիպող «Երեք ծառաների առակին»՝ պատումի մանրամասներով եւ ասելիքի նպատակներով: Միաժամանակ նշվեց, որ այս երկու առակները միմյանցից տարբերվում են մի շարք կարեւոր հանգամանքներով, այդ թվում՝ պատմած օրվա եւ տեղի պարագայով: Ուրի՞շ...**

- Տեղի եւ ժամանակի տարբերություններից բացի՝ այս երկու առակները զատվում են նաեւ իմաստային որոշակի նրբերանգներով: Սկսենք նրանից, որ Մատթեոսի Ավետարանի առակում տերն իր ծառաներին բաշխեց քանքարների տարբեր քանակություն՝ հինգ, երկու եւ մեկ: Ղուկասի Ավետարանի «Մնասների առակում» բոլորն էլ հավասար չափով ստացան: Ասում է. «Կանչելով իր ծառաներին՝ նրանց տասը մնաս տվեց...»: Տասն ամբողջն էր, որ տրվեց բոլորին, հավանաբար՝ յուրաքանչյուրին մեկական: Այլ հարց է, որ տիրոջը հաշիվ տալիս միայն երեք ծառայի ենք տեսնում: Կարծում եմ՝ այս երեքն ընդհանրացնում են նաեւ մյուսներին՝ մարմնավորելով մարդկային տեսակը: Այս տասը թիվը բավականին հետաքրքիր խորհրդաբանական մեկնություն ունի: Նախ՝ դա Աստծու տասը պատվիրաններն են, որ նա տվեց բոլորին եւ ասաց. «Շահարկեցե՛ք դրանով, մինչեւ որ գամ»: Շահարկեցե՛ք, այսինքն՝ գործածե՛ք, գործադրե՛ք: Մյուս կողմից՝ տասը, կատարյալ թիվ լինելով, խորհրդանշում է Քրիստոսի սրբազան Ավետարանը, քանի որ Ավետարանը՝ Աստծու Խոսքը, նույնպես կատարելություն է: Ուրեմն՝ կատարյալ փրկությունն էր, հավիտենական կյանքի, անկորնչելի Լույսի ճանապարհն էր, որ բաշխեց Տերն իր հետեւորդներին եւ նրանցից պահանջեց շահարկել, այս կյանքում գործադրել, որպեսզի օգուտ ունենան, այսինքն՝ փրկվեն:

Եվ ահա մեկ-մեկ մոտենում են ծառաները՝ հաշիվ տալու, թե ով ինչ էր շահել այդ մեկ մնասով: Առաջին ծառան մեկ մնասով տասն էր շահել, երկրորդը շահել էր հինգ մնաս, երրորդը՝ ոչինչ. ճիշտ եւ ճիշտ՝ «Քանքարների առակի» երրորդ ծառայի պես, այն տարբերությամբ միայն, որ նա քանքարը թաղել էր հողի, իսկ սա՝ ծրարել թաշկինակի մեջ: Այստեղ այլաբանությունը գրեթե նույնն է, ինչ որ Մատթեոսի Ավետարանում. առաջին երկու ծառաները ժրաջանորեն ու նվիրումով պահել ու գործադրել էին տասնաբանյա պատվիրանները: Հոգով-սրտով պաշտելով Աստծուն եւ արդյունավորելով տվածը՝ իրենց կյանքի ընթացքում տասնապատկել ու հնգապատկել էին Տիրոջ պարգեւած շնորհները, ինչի արդյունքում եւ արժանացան Տիրոջ գովեստին եւ նոր ու մեծամեծ պարգեւների: Իսկ երրորդը, որ թաքցրել էր մնասը, այսինքն՝ ուղղակի անգործության էր մատնել Աստծուց ստացած շնորհները, դատապարտվեց՝ զրկվելով ամեն ինչից: Այս առակում առկա է «գործող անձանց» մի խումբ, որը բացակայում է Մատթեոսի Ավետարանի առակում. Տիրոջ թշնամիներն են դրանք, որ առակում հանդես են գալիս «համաքաղաքացիներ» անվան տակ: Ասում է. «Բայց նրա համաքաղաքացիներն ատում էին նրան. պատգամավորներ ուղարկեցին նրա ետեւից եւ ասացին. «Մենք չենք կամենում, որ դա մեզ վրա թագավորի»: Թշնամիների վախճանը հայտնի էր ի սկզբանե. սրանք տիրատյաց էին եւ այդպիսին մնացին մինչեւ վերջ, ինչի համար էլ իրենց վարձատրությունն ստացան խստագույն պատժով: Սա հայտնի է դառնում առակի վերջում, երբ տերն իր թագավորությունն ստացած՝ վերադառնալով հրամայում է ծառաներին. «Իմ այն թշնամիներին, որոնք չէին կամենում, որ ես թագավորեմ իրենց վրա, բերե՛ք այստեղ եւ սպանեցե՛ք իմ առաջ»: Հասկանալի է, որ Տիրոջ երկրորդ գալստյանը՝ ահեղ դատաստանի օրը, Նրա երդվյալ թշնամիները, որոնք, ըստ մեկնիչների, «իրեն համաքաղաքացի» հրեաներն են, նաեւ այլադավաններն ու չար քրիստոնյաները, պիտի պատժվեն խստագույնս: Դատաստանը դատապարտություն է սրա՜նց համար, իսկ Տիրոջ հավատարիմ ծառաների համար՝ երանության պարգեւ ու փառքի բազմապատկում: Սակայն դատվելու ենք բոլորս: Ամեն մարդ կանգնելու է Աստծու ահեղ դատաստանի առաջ՝ ե՛ւ նրանք, ովքեր Տիրոջ մնաս-շնորհներն ստացան, ե՛ւ Նրա թշնամիները: Եվ ահա ծառաների մեջ էլ կային ծույլ ու թերահավատներ, որոնք նույնպես պատժվեցին, անշուշտ, ոչ այնքան խիստ, որքան թշնամիները: Առաջյալն ասում է. «Դատաստանն սկսվում է Աստծու տնից»: Ի՜նչ պատասխան պիտի տանք դատաստանի օրը, ինչպե՞ս պիտի արդարանանք Տիրոջ առաջ, եթե Նրա պարգեւած շնորհները գործադրելու եւ բազմապատկելու փոխարեն՝ թաքցրել ենք հողի մեջ կամ ծրարել թաշկինակում: Ինչ էլ որ ասենք, պատասխանը նույնն է լինելու՝ այն, որ ասվեց երրորդ ծառային. «Հենց քո բերանով քեզ պիտի դատեմ, անհավատարի՛մ ծառա, գիտեիր, որ ես մի խիստ մարդ եմ, վերցնում եմ, ինչ որ չեմ դրել, եւ հնձում եմ, ուր չեմ սերմանել: Հապա ինչո՞ւ իմ դրամը լումայափոխներին չտվիր, որպեսզի ես, գալով, տոկոսներով միասին պահանջեի այն»: Ո՞րն էր ծույլ ու անհավատարիմ ծառայի արդարացումը: Ասում է. «Վախենում էի քեզնից, որովհետեւ խիստ մարդ ես»: Ի՜նչ է ստացվում. վախենում էր եւ դրա՞ համար էր շնորհը մեռցնում: Ճիշտ հակառակը՝ պիտի վախենար չգործածելուց, պիտի վախենար չարդյունավորելուց, չպտղաբերելուց: Մենք ինչո՞ւ պիտի վախենանք Ավետարանի պատգամները պահելու եւ կատարելու համար, ինչո՞ւ պիտի վախենանք սիրելուց, խոնարհվելուց, Աստծուն պաշտելուց: Ինչո՞ւ առաջին երկու ծառաները ժրաջանորեն գործադրեցին մնասը, բազմապատիկ դարձրին շնորհը, իսկ վերջինը, իբրեւ թե վախենալով, թաքցրեց: Իրականում երրորդ ծառան պարզապես մեղանչել էր տիրոջ դեմ՝ ծուլությամբ ու թերահավատությամբ: Եվ ահա տերը հիշեցնում է անհավատարիմ ծառային այն փոքրիկ քայլը, այն նվազագույնը, որ նա ուղղակի պարտավոր էր անել: Ասում է՝ լա՛վ, ինքդ ես ասում, գիտեիր, որ խիստ մարդ եմ, եւ ընդունենք, թե վախենում էիր, ընդունենք նաեւ, որ ուրիշ ոչինչ չէիր կարող անել, բայց գոնե կարող էիր լումայափոխներին տալ մնասը, ինչո՞ւ չտվեցիր, դա էլ հո ջանք չէ՞ր պահանջում...



**- Ասել է թե՝ եթե ուրիշ բան չէիր կարող անել, գոնե կարող էիր Ավետարանն ընթերցել կամ տալ ուրիշներին, որ կարդան...**

- Իհարկե: Մնասները շահարկելն արդեն իսկ Քրիստոսի սրբազան առաքելությանը մարդկանց հասու դարձնել է նշանակում: Ավետարանը մարդկանց սրտերում սերմանել է նշանակում: Ընդունենք, որ այն մեկական մնասը, որ տրվեց բոլորին, սուրբ մկրտությունն է: Եվ ուրեմն՝ ամենքն ստացան Աստծու որդեգրությունը հավասարապես: Բայց ոմանք, առաջնային հոգեւոր շնորհով վերածնված, նորանոր առաքինություններով ընթացան այս կյանքում, մյուսները ծուլանալով գլացան: Նույնն է ձեռնադրության խորհրդի պարագայում. բոլոր քահանաներն էլ հավասարապես ստանում են քահանայության շնորհի (նույն մնասն է տրվում բոլորին): Արդյունքում մեկն առավելագույնս գործադրում է, մեկ ուրիշը, մեղա՜ Աստծու, մի տեսակ արհեստի է վերածում աստվածային շնորհը:

**- Եթե «ամեն ինչ սկսվում է Աստծու տնից», կարելի՞ է նաեւ ասել, որ ամեն ինչ սկսվում է Աստծու սպասավորից: Այսինքն՝ հոտը կարող է պտղաբերել, համայնքը կարող է ծաղկել, եթե նվիրյալ հովիվ ունի, եւ մյուս կողմից՝ քահանայի վարքագիծը կարող է գայթակղության առիթ դառնալ: Սրա՞ մասին է խոսքը:**

- Միանգամայն ճիշտ է: Պարզ քրիստոնյայի դեպքում առակի մնասը կարող է մկրտությունը լինել, օծության պարագայում՝ քահանայությունը: Սակայն գործադրման արդյունավետությունը թե՛ առաջին, թե՛ երկրորդ դեպքում տարբեր է: Մի կարեւոր հանգամանք եւս. առակի բոլոր ծառաներն էլ մեկական մնաս ստացան. հավասար պայմաններում մեկը կարողացավ առավելագույն արդյունք ապահովել. մեկին՝ տասը: Մյուսն ավելի քիչ. մեկի դիմաց՝ հինգ: Թերեւս այս մարդու կարողությունն էլ այդքան էր: Երկուսն էլ գովեստի ու պարգեւի արժանացան: Երրորդը պատժվեց, քանի որ այս դեպքում ոտնահարված էր պատվիրանը: Չպետք է մոռանալ, որ Աստված շատ լավ գիտի բոլորիս կարողությունները եւ ըստ այդմ էլ տալիս եւ պահանջում է: Գանձանակի մոտ կանգնած Քրիստոսը դիտում էր, թե ինչպես են մարդիկ մեծ-մեծ գումարներ նետում այնտեղ: Սակայն Քրիստոսը դրանք քիչ համարեց. նրանք ընդամենն իրենց ունեցածի ավելցուկն էին տալիս: Իսկ աղքատ ու այրի կնոջ երկու լուման Տերն ամենաշատը համարեց, որովհետեւ այդ չնչին գումարը կնոջ ամբողջ ունեցածն էր: Այս առակի տասը մնասը, թերեւս, հենց այդ մոտեցումով է գնահատվում: Եթե մի մարդ իր ամբողջ հոգով-սրտով պաշտում է Աստծուն, ուրեմն՝ նա մեկը տասը դարձրեց՝ անկախ իր ունեցածի նյութական հաշվեկշռից: Նա եթե որեւէ բան չունենար տալու, իր սիրտն էր տալու, իր սերն էր տալու, դրանով իսկ՝ առավելագույնը: Եվ ըստ իս՝ խիստ երկբայելի է այն կարծիքը, թե մեկից տասը մնաս ստացողները միայն հոգեւորականները կարող են լինել: Եթե ես քահանա եմ եւ կիրակի օրը քարոզում եմ, ու ինձ լսում է, ասենք, հարյուր հոգի, եւ եթե մի պարզ քրիստոնյա իր շրջապատում հինգ կամ երեք հոգու հաղորդ է դարձնում աստվածային ճշմարտություններին, քարոզում է կամ պարզապես իր առաքինի ու աստվածահաճո ընթացքով օրինակ է ծառայում իր շրջապատի համար, ապա որեւէ մեկը չի կարող ասել, որ դրա արդյունքն ավելի փոքր է, քան քահանայի քարոզը:

**- Ըստ մեկնիչների՝ այս առակի բարոյական իմաստն այն է, որ մարդը պետք է Աստծուց ընդունած շնորհներն իբրեւ ավանդ նկատի եւ այն արդյունավորի՝ իր իսկ օգուտի համար գործադրելով: «Իր օգուտի համար» արտահայտությունը հաճախ թյուրըմբռնման առիթ է դառնում:**

- Թյուրըմբռնումը միայն եւ միայն նյութականացնելու հետեւանք է: Եթե որեւէ մեկի տեսադաշտը սահմանափակված է գերեզմանափոսով, եթե մարդը մտածում է, թե գերեզմանից այն կողմ ոչինչ չկա, նման մեկը «օգուտ» բառն այլ կերպ չի էլ կարող հասկանալ, քան նյութական օգուտ միայն: Դա այն մարդն է, որը թշնամի է Քրիստոսին, որը չի հավատում, որ Քրիստոսը մեռավ եւ հարություն առավ: Այն մարդն է, որն առակում թշնամիների մեջ է, ովքեր չէին ուզում, որ օծյալ Տերն իրենց վրա թագավորի:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆՈՐ ՃԱՇԱՐԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ

Հուլիսի 11-ին Վաղարշապատում՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Հրաչ եւ Սյուզան Թուֆայան» հայորդյաց տանը, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց բարեգործական ճաշարանի բացման արարողությունը: Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ջեմմա Բաղդասարյանը, նախարարության աշխատակիցներ, ճաշարանից օգտվող տարեցներ:





Մայր Աթոռի հովանու ներքո գործող հերթական այս բարեգործական ճաշարանը՝ հովանավորությամբ հայորդյաց տան բարերարներ Հրաչ եւ Սյուզան Թուֆայանների, ամեն օր սպասարկելու է երկու հարյուր սոցիալապես անապահով, կարիքավոր անձանց:

Նորաբաց բարեգործական ճաշարանի օրհնության արարողությունից հետո սոցիալական ոլորտում Եկեղեցու կարեւոր այս ձեռնարկին անդրադարձան Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ վրդ. Բաբայանը եւ փոխնախարար Ջեմմա Բաղդասարյանը: Ճաշարանից օգտվողների անունից շնորհակալական խոսք ասաց Անահիտ Գրիգորյանը:

Այնուհետեւ ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Իր խոսքում Նորին Սրբությունը նշեց, որ Վաղարշապատ քաղաքում տարիներ շարունակ գործող բարեգործական ճաշարանի գործունեությունը դադարեցվել էր անբարենպաստ պայմանների պատճառով: *«Այսօր մեծ մխիթարություն է եւ գոհունակության առիթ է, որ վերստին իր դռներն է բացում բարեգործական ճաշարանը կարիքավոր մեր զավակների առջեւ, ուր պիտի գան երկու հարյուր անձ՝ ամենօրյա իրենց սնունդը ստանալու: Կարիքավորի նկատմամբ հոգատարությունն աստվածապարգեւ պատգամ է, եւ մեր Եկեղեցին չորրորդ դարից ի վեր աջակից է եղել, օգնության ձեռք է մեկնել, կողքին է եղել կարիքավոր անձանց»*,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Իր խոսքում Նորին Սրբությունը մասնավորաբար նշեց, որ բարեգործական ճաշարանների հաստատումը հայորդյաց տների տարածքում նաեւ դաստիարակչական նպատակ է հետապնդում, որպեսզի հայորդյաց տան մեջ կրթվող, դաստիարակվող սաները նույնպես կարողանան իրենց հոգատարությունը դրսեւորել մեծերի նկատմամբ, սովորեն հարգանք ցուցաբերել մեծերին, իրենց հոգու սերն արտահայտեն նրանց նկատմամբ:

Այս առիթով Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց բարեգործական ճաշարանի բարերարներ Հրաչ եւ Սյուզան Թուֆայաններին, ովքեր սիրահոժար կերպով հանձն են առել հովանավորությունը բարեգործական հաստատության:

Օրհնության խոսքից հետո Վեհափառ Հայրապետը, փոխնախարար Ջ. Բաղդասարյանը եւ Մայր Աթոռի միաբանները բարեգործական ճաշարանից օգտվողների հետ միասին ճաշեցին:

# ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԸ



Հունիսի 26-ին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանի գլխավորությամբ Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցավ հոգեւորականների տարեկան հաշվետու ժողովը:

Սրբազան հայրը ողջունեց ժողովականներին եւ ներկայացրեց թեմի մեկ տարվա ձեռքբերումներն ու համայնքային կյանքում տեղ գտած դժվարությունները: Թեմի հոգեւոր կյանքի աշխուժացման մեջ, որպես կարեւոր ձեռքբերում, նշեց եկեղեցաշինությունը՝ մասնավորապես անդրադառնալով մայիսին Դոնի Ռոստովում Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ձեռամբ օծված Ս. Հարություն եկեղեցուն: Այն կառուցվել է պատմական Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տեղում, որը քանդել էին համայնավարները 1965 թվականին: Սրբազան հայրը գոհունակությամբ նշեց, որ հունիսի 30-ին Ն. Ս.Օ. Տ.Տ. Գարեգին Բ-ի ձեռամբ օծվելու է նաեւ Ռիգայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Ժողովականները տեղեկացան, որ շուտով հայ հավատացյալների առջեւ իրենց դռները կբացեն Եկատերինբուրգի, Վլադիվոստոկի եկեղեցիները: Թեմակալ առաջնորդը տեղեկացրեց նաեւ, որ բարեհաջող շարունակվում են Մոսկվայի հայկական եկեղեցական համալիրի շինարարական աշխատանքները: Մոսկվայի Պոկլոննայա Գորայում նախատեսված Մեծ հայրենականի եւ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող «Սրբոց նահատակաց» հայկական եկեղեցու կառուցման համար քարերը Հայաստանից արդեն բերվել են:

«Թեմի հոգեւոր զարթոնքը նկատելի է ոչ միայն եկեղեցաշինության մեջ,- ասաց թեմակալ առաջնորդը: Մեր ծառայության գնահատականը տալիս է ժողովուրդը: Այսօր մեր եկեղեցիները լի են հավատացյալներով ոչ միայն տոն օրերին: Մարդիկ գալիս են եկեղեցի խաղաղություն եւ մխիթարություն գտնելու, քահանայի հետ խորհրդակցելու, ինչպես նաեւ մեր հոգսը կիսելու եւ աջակից լինելու նախանձախնդրությամբ»:

Սրբազան հայրը ուրախությամբ նշեց, որ թեմում ստեղծվում են նոր ծխական համայնքներ եւ արդեն կան քաղաքներ, որոնց թվում՝ Վլադիմիրը, Պերմը, Մագնիտոգորսկը, Նովոսիբիրսկը, Նիժնի Նովգորոդը, Իժեւսկը, Ռոստովը, որոնք քահանաների կարիք ունեն:

Ժողովին հոգեւորականներից յուրաքանչյուրը ներկայացրեց իր համայնքի մեկ տարվա գործունեությունը: Քննարկվեցին երիտասարդաց միությունների գործունեության ակտիվացման եւ փոխշփումների կազմակերպչական հարցերը: Տ. Եզրաս եպս Ներսիսյանն առաջարկեց հաճախ կազմակերպել ուխտագնացություններ դեպի Սուրբ երկիր, հայրենիք, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, նաեւ հանդիպումներ տարբեր համայնքների երիտասարդաց միություններ: Եկեղեցու զորացման եւ թեմի կայացման գործում կարեւորելով քահանայի ծառայությունը՝ սրբազան հայրը հորդորեց հոգեւորականներին համայնքային կյանքում առավել ակտիվ լինել: «Մեր ամբողջ առաքելությունը պիտի նպատակաուղղվի վաղվա օրվան: Ոչ միայն Աստծո խոսքը պիտի փոխանցենք երիտասարդներին, այլեւ նրանց կրթենք ու դաստիարակենք քրիստոնեական ոգով ու արժեքներով, որպեսզի մեր վաղվա օրը ապահով լինի: Դրա համար շատ կարեւոր է Եկեղեցու ներսում մատաղ սերնդի կրթադաստիարակչական գործը: Եթե ակտիվ ու անձանձիր գործենք, ապա կզորանա Հայ Եկեղեցին, իսկ եթե ծուլանանք, կտկարանա այն»,- ասաց սրբազան հայրը:

Այն համայնքներում, որտեղ դեռեւս չկան կիրակնօրյա դպրոցներ, թերթեր ու ինտերնետային կայքեր, սրբազան հայրը հանձնարարականներ տվեց առաջիկայում ստեղծել դրանք:

Ժողովի ավարտին Տ. Եզրաս եպս Ներսիսյանը իր հայրական օրհնությունը բաշխեց մասնակիցներին եւ հորդորեց ապրել համայնքի յուրաքանչյուր անդամի հոգսով ու ցավով, մխիթարել ու աջակից լինել հայրենիքից հեռու ապրող մեր հայրենակիցներին:

*Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի մամլո դիվան*

# ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

*Սկիզբը՝ էջ 7*

Մարդկանց մի տեսակ էլ կա (որպիսիք բավականին մեծ թիվ են կազմում), որոնք ուղղակի լսել են կամ կարդացել ու մտածում են. «Դե որ այդքան ասում են, երեւի մի բան կա»: Եվ այսօր արդեն անհավատության զորեղ նեցուկ չունենալով՝ սրանք որդեգրել են, մի տեսակ, միջանկյալ, շատ գաղջ ու տաղտկալի կեցված. իբրեւ թե հավատացյալ են, բայց իրականում ոչինչ էլ չեն: Սրանք շատ նման են ավետարանական առակի՝ մնասն ստացած, բայց երբեւէ չշահարկած ծառային. կարծես թե չկորցրին, սակայն չշահարկելով՝ իրականում ինչ-որ մի բան էլ չհանին... իրականում ի՞նչ էլ չիք դարձրին: Իսկ նրանք, ովքեր գերեզմանից այն կողմ են տեսնում, տեսնում են հավիտենական կյանքը, նրանք, ովքեր հավատում են Քրիստոսի հարությանը, ովքեր գիտեն, որ այս կյանքը ժամանակավոր է, եւ երկնքի թագավորության հույսն ունեն իրենց հոգում, այս մարդիկ մի բան շատ լավ գիտեն. քանի դեռ ժամանակը եւ այս կյանքն իրենց ձեռքին են, իրենք պետք է այն մշտապես շահարկեն, քանի որ Տերը շուտով պիտի գա: Գուցե հազար տարի հետո, գուցե հենց վաղը... Եվ ուրեմն՝ պետք է միշտ արթուն լինել ու բարին գործել ժրաջանորեն, անտրտունջ, պետք է հարաժամ աղոթել, Աստծուն պաշտել, եկեղեցու շեմը մաշեցնել, առաքինության գործեր գործել՝ սիրել, ներել, խաղաղություն հաստատել, հույսով ապրել եւ այս ամենով նաեւ բարի օրինակ դառնալ այլոց համար: Ա՛յս ծառան է, որ իրեն շնորհված մկրտության մեկ մնասը կարողանում է տասնապատկել: Եվ իր ունեցածի վրա պիտի տրվի ու պիտի ավելացվի, ինչպես որ առակի վերջում հրահանգում է Տերը: Եվ որքան էլ որ աշխարհիկ ընկալմամբ անարդարացի է թվում չունեցողից եղածն էլ վերցնելու եւ ունեցողին տալու աստվածային վճիռը, ուզում եմ շեշտել, որ դա խիստ արդար դատաստան է: Այս մասին արդեն խոսել ենք նախորդ զրույցում: Ուզում եմ միայն մեկ օրինակ բերել. չե՞ք նկատել՝ գիտուն մարդիկ գրքերն այնպես են կարդում, կարծես ոչինչ չգիտեն, իսկ ծույլ ու անբան մեկը, որ կյանքում ոչ մի գիրք չի կարդացել, ցանկություն էլ չունի որեւէ բան սովորելու, կարծում է, թե ամենագետ է. մեզանից յուրաքանչյուրն ինչպե՞ս կվարվեր նման մեկի հետ: Կամ՝ նրանք, ովքեր աղոթել գիտեն, ամեն օր տենչում են նոր աղոթք սովորել: Մեր եկեղեցում տատիկներ ունենք, որ միայն տեսնել է պետք՝ ինչ բարդ շարականներ են սովորում ու մեզ հետ երգում ժամերգություններին: Բայց 30-40 տարեկան մի մարդ էլ իրեն ծերունի է հայտարարում՝ ասելով, որ իր ուսման ժամանակն արդեն անցել է: Ուրեմն՝ չունեցողից, այո՛, ունեցածն էլ պիտի վերցվի, իսկ ունեցողին պիտի տրվի եւ ավելացվի:

*Հյուրընկալեց Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

# ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ «ՎԵՐՆԱՏՈՒՆ» ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ



Հունիսի 26-ին Թբիլիսիում, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի նախաձեռնությամբ, ՀՀ մշակույթի նախարարության հովանավորությամբ, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության օժանդակությամբ, խորհրդարանի գրադարանի ժողովասրահում տեղի ունեցավ Վրաստանի հայ գրողների համաժողով:

Համաժողովին մասնակցեցին վրաստանաբնակ հայ ստեղծագործողներ տարբեր շրջաններից՝ Սամցխե-Ջավախեթիից, Քվեմո-Քարթլիից եւ մայրաքաղաք Թբիլիսիից:

Մասնակիցները հյուրընկալվեցին Վիրահայոց թեմի առաջնորդարանում: Ապա այցելեցին Թբիլիսիի հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն, ծաղիկներ զետեղեցին հայ մեծերի շիրիմներին, թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպս Միրզախանյանի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստի արարողություն:

Այնուհետեւ համաժողովի անդամներն այցելեցին Թբիլիսիի Սբ Էջմիածին եկեղեցի եւ մասնակցեցին աղոթքի արարողությանը, որից հետո մասնակիցներին իր օրհնությունը բերեց թեմի առաջնորդը:

Համաժողովը բացեց Վիրահայոց թեմի առաջնորդը: Ելույթ ունեցան «Վերնատուն» միության նախագահ Գեւորգ Սնխչյանը եւ միության շատ անդամներ:

Սրբազան հայրը հորդորեց ստեղծել եւ ստեղծագործել ազատ եւ անկեղծ՝ ի նպաստ հայ գիր ու գրականության պահպանության եւ այն մատաղ սերնդին փոխանցելուն:

Համաժողովն անցավ աշխատանքային մթնոլորտում: Մասնակիցները ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքները, առաջ քաշեցին առկա խնդիրներն ու հարցերը: Հիմնական հարցադրումներից մեկը գրքերի տպագրության խնդիրն էր:

Համաժողովի ավարտին տեղի ունեցավ վիրահայ ճանաչված թարգմանիչ, գրող, հրապարակախոս Անահիտ Բոստանջյանի «Նժարի «զույգ ափերի» մեջ» եւ Գեւորգ Սնխչյանի «Ընտրանի» գրքերի, ինչպես նաեւ ՀՀ Սփյուռքի նախարարության հովանավորությամբ լույս տեսած «Վերնատուն» տարեգրքի շնորհանդեսը:

Շնորհանդեսին ներկա էին Թբիլիսիի հասարակական եւ պետական գործիչներ, մտավորականներ:

*Վիրահայոց թեմի մամլո դիվան*

# Կիրակնօրյա կրթօջախների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը, «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության հետ համատեղ, հունիսի 27-ից հուլիսի 1-ը Ծաղկաձորում անցկացրեց կիրակնօրյա կրթօջախների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցեց Հայ Առաքելական Եկեղեցու հայաստանյան թեմերի ավելի քան 70 կիրակնօրյայի շուրջ 150 ուսուցիչ:

Դասընթացի առաջին օրը ներկաներին ողջունեց եւ իր հայրական օրհնությունը բերեց Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս Քարամյանը: Մասնակիցներին ողջունեց նաեւ «Վորլդ Վիժն» կազմակերպության՝ Եկեղեցու եւ պետության հետ կապերի բաժնի պատասխանատու տիկին Կարինե Հարությունյանը: Այնուհետեւ թեմերի ներկայացուցիչները մասնակիցներին ծանոթացրին թեմերի կիրակնօրյա դպրոցների ընդհանուր գործունեությանը եւ նախընթաց ուսումնական տարվա ձեռքբերումներին:

Ըստ ծրագրի՝ վերապատրաստումն ընթացավ երկու հիմնական ուղղությամբ: Սուրբ Գրքի ուսուցման շրջանակներում մասնակիցները դասախոսություններ լսեցին Սուրբ Գրոց մեկնաբանության հմտությունների, Ս. Գրքի եւ հնագիտության, ինչպես նաեւ քրիստոնյայի կյանքում ծեսի կարեւորության վերաբերյալ: Երկրորդ բաժինը վերաբերում էր դասավանդման մեթոդաբանությանը, դասի ճիշտ կառուցմանը, առաջնորդության, արդյունավետ հաղորդակցության եւ կառավարման սկզբունքներին: Մեթոդական բնույթի դասախոսություններին հաջորդեցին խմբային աշխատանքներ:

Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի, Հայաստանի Աստվածաշնչային ընկերության եւ «Վորլդ Վիժն»-ի կողմից ուսուցիչներին հանձնվեցին հոգեւոր գրականություն եւ նվերներ: Հունիսի 30-ին ուսուցիչներին հյուրընկալվեց Վազգենյան հոգեւոր դպրանոցի քառաձայն երգչախումբը, որը հոգեւոր եւ աշխարհիկ երգերի հոգեպարար կատարումներով ոգեշնչեց ներկաներին:

Հուլիսի 1-ին տեղի ունեցավ հնգօրյա դասընթացի պաշտոնական փակումը: ՔԴԿ-ի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանն իր խոսքում երախտագիտություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ ամենօրյա հոգածության համար, ապա անդրադարձավ կիրակնօրյա վարժարանների կարեւորությանը հոգեւոր եւ ծխական կյանքում: Դրական գնահատելով ամենամյա այս վերապատրաստումները՝ հայր սուրբը կարեւորեց կիրակնօրյա կրթօջախների անփոխարինելի դերը՝ հայ մանուկների հոգում հավատի զորացման, եկեղեցասիրության եւ քրիստոնեական գիտակցության ձեւավորման գործում: ՔԴԿ-ի տնօրենն ուրախությամբ տեղեկացրեց նաեւ, որ Հայաստանի տարբեր թեմերում վերջին մեկ տարվա ընթացքում շուրջ 20 կիրակնօրյա նոր դպրոց է հիմնվել, ինչպես նաեւ ուսուցչական կազմը համալրվել է երիտասարդներով:

*Լրատվական նյութերը՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*


**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր. 18.07.2011 թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**